

**ՀԱՅԿԱԿԱՆ ԶԻՆԱՆՇԱՆՆԵՐ
ԱՐՏԱՇԷՍԵԱՆՆԵՐ, ԱՐՇԱԿՈՒՆԻՆԵՐ
ԶԱՐԳԱՅԱԾ ԱՒԱՏԱՊԵՏՈՒԹԻՒՆ**
(Ծառ. «Բազմալիւս» 161 [2003] էջ 132-177)

**ԲԱԺԻՆ Բ
ԶԱՐԳԱՅԱԾ ԱՒԱՏԱՊԵՏՈՒԹԵԱՆ
ԴԱՐԱՇՐՋԱՆ**

**ԳԼՈՒԽ Ա.
ԲԱԳՐԱՏՈՒՆԻՆԵՐԻ
ԶԻՆԱՆՇԱՆՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳԸ**

**1. ԲԱԳՐԱՏՈՒՆԻՆԵՐԻ ՏՈՀՄԱԿԱՆ ԶԻՆԱՆՇԱՆԻ
ՍՏՈՒԳԱԲԱՆՈՒԹԻՒՆԸ**

«Հայկական զինանշանների» առաջին մասում քննելով Բազմաթուղթների տոհմական զինանշանի յօրինուածքը՝ նրա կառոյցը եւ բաղադրիչները, ցոյց ենք տուել, որ այն ունեցել է բարդ կառոյց եւ միաւորուել է տոհմական աւանդապատումի ազդեցութեամբ: Յօրինուածքի գլխաւոր բաղադրիչներն են առիւծները («ծնող-զոյգ»), կանգնած դէմ-դիմաց կենաց ծառի երկու կողմից: Առիւծներից իւրաքանչիւրի տակ մեծ կամարներ են, իսկ վերելում գունդ-օղակներ (նկ. 17):

Յօրինուածքի համար նախնական օրինակ է ծառայել ուրարտական (հնագոյն հայկական) յօրինուածքը՝ զոյգ առիւծներ վարդեակի երկու կողմից կանգնած (հրեբունի ամրոցի որմնանկար): Սակայն Բազմաթուղթների առանձին բաղադրիչները

(կենաց ծառ, առիւծներ, կամարները եւ աւելի փոքրածառաւ նըշանները) առանձին վերցրած ունեն կրօնա-դիցաբանական, պատմա-առասպելական արմատներ, որոնք միանալով սիւժետային մէկ յօրինուածքի մէջ եւ լրացնելով մէկը միւսին, կազմում են մէկ ամբողջական գինանշան-յօրինուածք:

Այդ պատճառով տոհմի սիւժետային խորհրդանիշը բացատրելու եւ նրա իմաստաբանութիւնը պարզելու համար անհրաժեշտ է քննել առանձին-առանձին բոլոր բաղադրիչների իմաստը:

Սկսենք կենաց ծառից: Նրա վրայ դրուած է անօթ եւ ծառի սաղարթը կարծէք աճում է անօթից: Բնի վրայ կան պտուղներ, իսկ անօթի տակ պտուղների փոխարէն օձերի գլուխներ են՝ «զոյգ-ծնողներ»: Անօթի մէջ լցւում էր կենաց հեղուկը, այն օգտագործւում էր կենաց ծառերին նուիրուած հանդէսների ժամանակ եւ պատրաստւում էր յատուկ բոյսերից (Հայաստանում՝ խաղողի եւ նուա՛ն հեղուկից)⁶⁸:

Ա. Մնացականեանը նկատում է, որ զարդարուեստում կենաց ծառն եւ անօթը յաճախ ցոյց են տրւում հակառակ դիրքով՝ ոչ թէ ծառն է գտնւում անօթի մէջ, այլ անօթն է գտնւում ծառի վրայ: Բազրատունեաց գինանշանում ծառի սաղարթը աճում է անօթից, բայց ինքը անօթը գտնւում է ծառի ընի վրայ: Ծառը, անօթով եւ սաղարթով, կազմում է ամբողջ յօրինուածքի առանցքը:

Օձը՝ մարդկութեան հնագոյն խորհրդապատկերներից է, որը տարբեր երկրներում ունեցել է տարբեր իմաստ: Ամէնից յաճախ մեկնաբանուել է որպէս իմաստութեան խորհրդանիշ: Վաղ միջնադարում «Օձ» հասկացութեան շուրջ երեւան են եկել հակասական գնահատականներ, մեկնաբանութիւններ եւ օձի խորհրդանիշին տրուել է զանազան իմաստ:

Աստուածաշնչում օձը յաճախ ընկալուել է որպէս իմաստութեան խորհրդանիշ, եւ Քրիստոսին մի ժամանակ նոյնացնում էին օձի հետ:

⁶⁸ ՄՆԱՑԱԿԱՆԵԱՆ Ա., Հայկակաճ զարդարուեստ, Երեւան, 1955, էջ 472-474, 479, 484:

Վաղ քրիստոնէական գրականութեան մէջ Քրիստոսին նոյնացնում էին «անապատի պղնձէ օձի» հետ⁶⁹:

Օձերը եւ վիշապները տոտեմ էին, նրանց հետ կապուած էին «ղովլաթ» օձերը, որոնք բնակւում էին տներում, պարտէզներում եւ որոնց մարդիկ չէին հալածում, կարծելով, որ իրենց յաջողութիւնն ու երջանկութիւնը պայմանաւորուած է այդ օձերի գոյութեամբ⁷⁰:

Այսպիսով, հայ ժողովրդի եւ նրա նախնիների հեռաւոր անցեալում, որպէս տոտեմ, մեծ տեղ են գրաւել նաեւ վիշապ-օձերը: Հայերի դիցաբանութեան, զարդարուեստի պատկերացումների մէջ օձերը մարմնաւորուում էին չար եւ բարի ուժերը:

Գլխաւոր յատկանիշը, որով հնարաւոր է տարբերել տոտեմ, այսինքն բարի վիշապ-օձերին չար, թշնամի մարմնաւորում օձերից, հետեւեալն է՝ եթէ օձերը պատկերուած են ծնող զոյգերով, կենաց ծառով, առանձին, ապա դրանք պատկանում են առաջին խմբին: Իսկ եթէ նրանք հանդիպում են զանազան կենդանիների եւ մարդկանց դէմ կռուելիս, կենաց ծառը կլանելիս, նման այլ դիրքերով, ապա նրանք չար ուժերի մարմնաւորում են⁷¹:

Տոտեմ էին նաեւ առիւծները, այդ մասին վկայութիւններ չատ կան: Առիւծը արիութեան, հպարտութեան, ուժի խորհրդանիշ էր:

Մովսէս Խորենացու «Պատմութեան» միջոցով (Ա., իբ.) մեզ է հասել տոհմական պատում Բագրատունիների «հրէական» ծագման մասին: Այդ պատումը արտայայտում էր Բագրատունիների ձգտումը (միտումը) ծագումնաբանական կապ ունենալ Դաւիթ մարգարէի եւ Աստուածամօր հետ: Այդ աւանդապատումը արձագանք էր այն իրողութեան, որ քրիստոնէութեան տարածման վաղ շրջանում Բագրատունիների նախնիները հետեւում էին մովսիսական վարդապետութեանը:

Մեծ Հայք քրիստոնէութիւնը սկսել էր մոտք գործել դեռեւս Բ. դ. վերջերին Ասորիքից, Կապադովկիայից եւ Փոքր Հայք

⁶⁹ В. Похлебкин, Международная символика..., с. 81, 82.

⁷⁰ ՄՆԱՅԱԿԱՆՆԱՆ Ա., Նշուած աշխատութիւնը, էջ 523:

⁷¹ Նոյն տեղում:

քից եկող քարոզիչների միջոցով: Քրիստոնեությունից առաջին օլախներին մէկը դարձել էր նաեւ Ադիաբէն երկիրը Հայաստանի հարաւային սահմաններում: Այստեղից եւս Հայաստան էին թափանցում քրիստոնեայ քարոզիչներ եւ տարածում քրիստոնէական վարդապետութիւնը:

Մ. Թ. Ա. դ. կէսերին Բագրատունիների տոհմի նախնիները՝ «ազգն Շամբատայ» (Σαμβαται ετρηοσ) (տե՛ս Ptol., VI, 1, 2) որոնք բնակւում էին Ադիաբէնին սահմանակից Մահկերտուն գաւառում ընդունում են քրիստոնէութիւն, որը սկզբնապէս շփոթւում էր Մովսիսական կրօնի հետ: Մովսէս Խորենացին «Պատմութեան» մէջ Բագրատունիների նախնիներին համարում է «հրեայ», որը նշանակում է եբրայական կրօնի հետեւորդ, իսկ իրականում նրանք քրիստոնէական կրօնի հետեւորդներ էին⁷²:


Ձինանշանի յօրինուածքում որոշակի դեր են կատարում կամարները, յետագայ դարերում նրանք հանդիպում են պաշտօնական-պետական խորհրդանիշ յօրինուածքներում (Հաղպատի ս. Նշան եկեղեցի, Հառիճի վանք): Բայց նրանց իմաստը առայժմ պարզ չէ եւ պահանջում է առանձին քննութիւն:

Ամբողջ յօրինուածքը տեղադրուած է մեծ կամարի մէջ, որը կազմում է նրա արտաքին եզրագիծը (նկ. 17): Կամարի վրայ դրուած են շուշանի եւ նուան նկարները: Առաջին հայեացքից թւում է, որ դրանք սովորական զարդամոտիւններ են, բայց դա այդպէս չէ: Ծաղրանկարները, ի հարկէ, զարդարում են մանրանկարը, բայց նրանք անմիջականօրէն կապուած են կամարի ներսում պատկերուած խորհրդանիշ յօրինուածքի հետ եւ ընդգծում նրա խորհրդանիշ բնոյթը:

Շուշանը (եւ մի քանի այլ ծաղիկներ, օր. վարդը) խորհրդանշաններում օգտագործւում է հնագոյն ժամանակներից, որպէս լրացուցիչ նշան, որը ընդգծում է պատկերի իւրայատուկ (զինանշան) բնոյթը: Նուռը նոյնպէս վաղ ժամանակներից պատկերուել է խորհրդանշաններում, յատկապէս հին արեւելքի երկրներում: Աստուածաշնչում այն անուանւում է «խնձոր» եւ յետա-

⁷² ՄԵԼՔՈՆԵԱՆ Հ., Ադիաբենի պետութիւնը եւ Հայաստանը, Երեւան, 1980, էջ 129-133: Հայ ժողովրդի պատմութիւն, Հ. 1, Երեւան, 1971, էջ 747, Հ. 2 (Երեւան, 1984), էջ 73:

գայում այդ ոչ ճիշտ անուանումը տարածուեց եւրոպական լեզուներում: Նուան պտուղի, ծառի արմատների, կեղեւի, տերեւների, կորիզների եւ հիւթի բուժիչ յատկութիւնները հնում մեծ տպաւորութիւն էին ստեղծում մարդկանց մօտ (առանձնապէս բաբելոնացիների, եգիպտացիների մօտ): Նուան ծառը դարձաւ «աստուածային» իսկ պտուղը պաշտում էր: Նրա պատկերը սկսեցին օգտագործել որպէս իշխանութեան խորհրդանիշ: Այդ երեւոյթը տարածում գտաւ անտիկ շրջանում եւ միջին դարերում:



Նկ. 17

Բագրատունիների տոհմական զինանշան:
Մլխ Թագուհու աւետարան

Համոզուած ենք, որ Բագրատունիների զինանշանում, նրա արտաքին շրջագծի վրայ շուշանի եւ նուան նկարները դրուած են յատուկ նպատակով՝ ընդգծելու ամբողջ յօրինուածք-պատկերի պաշտօնական, բնոյթը:

Շուշանն ու նուռը (խնձորը) որպէս խորհրդանշանների յատկանիշ, պատկերուել են նաեւ յետագայ դարերում, ինչպէս Բագրատունիների, այնպէս էլ Զաքարեանների եւ Կիլիկիայի Թագաւորների իշխանութեան խորհրդանշաններում:

ԿԱՐՍԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐԻ ԽՈՐՀՐԴԱՆԻՇ ԵՒ
ԿՏԻՏՈՐԱԿԱՆ ՔԱՆԴԱԿՆԵՐԸ

Ի. դ. 20-ական թթ. վերջում Կարսի ամրոցը Աշոտ Բ. Երկաթ Թագաւորի եղբայր Աբաս Բագրատունու իշխանանիստն էր,

929 թ. Աբասը ժառանգեց զաճը, դրա հետեւանքով նրա իշխանանիստը (իշխանական աթոռանիստը) դարձաւ մայրաքաղաք:

Աշոտ Բ-ի գահակալութեան վերջին շրջանում յաղթանակով աւարտուեց պայքարը իսլիմայութեան հետ եւ Հայաստանը պահպանեց անկախութիւնը: Սկսուեց խաղաղ մի շրջան, որը տեւեց մէկ դար: Աբաս Բագրատունին ձեռնարկեց ժամանակի պահանջներէն բխող քայլեր թագաւորական (կենտրոնական) իշխանութիւնը ամրապնդելու համար, բարելաւուեցին յարաբերութիւնները Արծրունիների հետ, վերջինները ընդունեցին (աւելի ճիշտ ստիպուած եղան) Բագրատունիների գերիշխանութիւնը երկրում, փոխզիջման արդիւնք էր Արծրունիների եպիսկոպոս Անանիա Մոկացու ընտրութիւնը կաթողիկոսի գահին: Իսկ Արծրունիները համաձայնուեցին, որ կաթողիկոսի աթոռը Աղթամարից վերադառնայ Բագրատունիներին ոստան, տուեալ դէպքում՝ Կարս:

Աբասը կատարեց առաջին քայլերը կենտրոնացնելու արքունիքը Կարսում եւ այն դարձնել թագաւորների մշտական (արքունի) աթոռանիստ: Այդ նպատակով նա կաթողիկոսութիւնը հաստատեց Կարսում եւ կառուցեց մայր տաճարը՝ Առաքելոց եկեղեցին⁷³: Եթէ 949 թ. Բիւզանդիան արաբներից խլած շրջաններում (Կարինի ամիրայութիւն) չստեղծէր Կարին բանակաթեմը, որը արեւմուտքից ուղղակի սահմանակցում էր Հայոց թագաւորութեանը, ապա մայրաքաղաքը կը մնար Կարսում: Բայց բանակաթեմի վտանգաւոր հարեւանութիւնը ստիպեց Աշոտ Գ. Ողորմածին 961 թ. մայրաքաղաքը Կարսից տեղափոխել Անի⁷⁴:

Կարսում հաստատուել էր նաեւ արքունիքը, ճնայած մեզ յայտնի գրաւոր աղբիւրները, մասնաւորապէս Ստեփանոս Տարօնեցիի Ասողիկը, նրա գործունէութեան մասին ոչինչ չեն հաղորդում, այնուհանդերձ արքունիքում պաշտօններ էին վարում Բագրատունիներին ամենամերձաւոր իշխանական տներէ անդամները: Այդ մասին պերճախօս վկայում են Առաքելոց եկեղեցու խորհրդանշանները:

⁷³ Մանրամասն տե՛ս մեր մենագրութիւնը՝ Բագրատունեաց Հայաստանի պետական կառուցուածքն ու վարժական կարգը, Երեւան, 1990, էջ 134-141:

⁷⁴ Նոյնը, էջ 142-143:

Մայր տաճարի (սբ. Առաքելոց եկեղեցու) կառուցումը, մասնագետների հաշվարկումներով, սկսվեց 930 թ. եւ աւարտուեց 942 թ.⁷⁵ :



Նկ. 18

Կարսի Մայր տաճարի բմբուկը

եկեղեցու թմբուկը ունի բարձրաքանդակներ՝ 12 մարդկանց պատկերներ (նկ. 18): Մասնագիտական գրականութեան մէջ, ներառեալ Վերջին շրջանի մենագրութիւններում նշում է, որ դրանք 12 առաքելների պատկերներ են: Ըստ երեւոյթին նկատի է առնուել եկեղեցու անունը: Սակայն, գրում է ճարտարապետութեան դոկտոր Ս. Մնացականեանը, երբ Ֆրանսիական եւ իտալական գիտական արշաւախմբերը հրատարակեցին քանդակների լուսանկարները, պարզ դարձաւ, որ պատկերուած են ոչ թէ առաքելներ, այլ աշխարհիկ մարդիկ (բոլորը գլխաբաց):

Սակայն, այնքան ուժեղ է աւանդական կարծիքը, որ նոյնիսկ լուսանկարները հրատարակող հետազոտողները, դարձեալ նրանց համարել են առաքելների, թէեւ հազուատների ձեւերը եւ լուսապսակների բացակայութիւնը բացառում է նման եզրակացութիւնը⁷⁶ :

Բարձրաքանդակները տեղադրուած են խուլ կամարաշարի անտրվոլտներում (Զուարթնոցի ազդեցութիւն):

Ս. Մնացականեանը այն կարծիքին է, որ Աբաս Բագրատունու պալատական եկեղեցու քանդակներում պատկերուել են Բագրատունեաց նախարարական տան նախնիները, թագաւորական տան անդամները, եւ հաւանաբար այն իշխանները, որոնք

⁷⁵ ՄՆԱՅԱԿԱՆՆԱՆ Ա., Հայկական աշխարհիկ պատկերաբանդակը IX-XIV դդ., Երեւան, 1976, էջ 66; T. M. Thierry, La cathedrale des Saints-Apôtres de Kars (930-943), Louvain, Paris, 1978, p. 1.

⁷⁶ ՏԵՍ ՄՆԱՅԱԿԱՆՆԱՆ Ա., Նշուած աշխատութիւնը, էջ 67:

օժանդակել են Աբաս թագաւորի հզօրացմանը եւ մասնակցել տաճարի կառուցմանը⁷⁷ :

Աւանդական հին տեսակէտը պաշտպանում է Փրանսիացի արուեստագէտ Ժ. Տիերին, 1978թ. Փրանսերէն հրատարակած ուսումնասիրութեան մէջ նա նորից բարձրաքանդակները համարում է առաքեալների պատկերները: Նրա կարծիքով, պատկերուած են 11 առաքեալներ եւ Մարիամ կոյսը⁷⁸ :

Երկու հակադիր կարծիքներից անկասկած ճշմարիտ է ոչ աւանդականը: Ս. Մնացականեանը ճիշտ է դիտել, որ բարձրաքանդակներում պատկերուած են այն աշխարհիկ անձինք, որոնք մասնակցել են տաճարի կառուցմանը, եւ այն մարդիկ, որոնք կազմել են Բաղրատունի թագաւորի արքունի շրջապատը եւ, հաւանաբար, նրա ազգակիցները: Պէտք է նկատի ունենալ, որ գերագոյն գերադասի որեւէ կարեւոր ձեռնարկութեանը միշտ մասնակից են եղել նրա մերձաւոր անձինք՝ ազգակիցները (որդիւն, եղբայր) եւ նրա անմիջական ստորադաս իշխանները, դա վերաբերուում էր ոչ միայն մասնակցութեանը պատերազմում կամ արքունի ծառայութեանը, այլեւ շինարարական ձեռնարկումներին խաղաղ ժամանակ: Այդպիսի մասնակցութիւնն նրանց պարտականութիւնն էր (ծառայութեան արտայայտութիւններէ մէկը):

Մայրաքաղաքում Մայր տաճարի կառուցումը ոչ միայն պարտականութիւնն էր, այլեւ շնորհ, իսկ աւատապետի տոհմական նշանի կամ նրա պատկերի քանդակումը տաճարի վրայ թագաւորի հատուցումն էր ստորադասին եւ պատուաբեր վերջինի համար:

Մենք գտնում ենք, որ տաճարի 12 բարձրաքանդակները վերաբերուում են այն ազդեցիկ աւատապետներին, որոնք ունէին բարձր դիրք արքունիքում, մօտ էին Բաղրատունիներին եւ առաջին հերթին Աբաս թագաւորին, մասնակցել են տաճարի կառուցմանը եւ որպէս պարգեւ քանդակուել են նրանց բարձրա-

⁷⁷ Նոյն տեղում:

⁷⁸ T. M. Thierry, նշուած աշխատութիւնը, p. 46, 47: Տէ՛ս նաեւ Жан Мишель Тьерри, Скульптурный докер собора св. Апостолов в Карсе, II Международны́й симпозиум по арм. искусству (Тезисы), Ереван, 1978, с. 3,4.

քանդակները (նրանք անկասկած ստացել են նաեւ նիւթական բնույթի պարզեւներ):



Նկ. 18ա



Նկ. 18բ



Նկ. 18գ


Կախորական Էանդակներ Կարսի Մայր տաճարի բմբուկի վրայ

Բարձրաքանդակները կարելի է բաժանել երեք խմբի, ելնելով նրանց ձեւերի դիրքերից եւ ուղեկցող նշաններից: Նրանցից երեքը ձեւերը բարձրացրել են վեր, վեցը՝ պահում են սրտի կամ փորի վրայ: Միւս երեքը առանձնանում են. մէկի ձեւը կացնատիպ գործիք է: Միւսի կողքին ծառ է (կենաց ծառ), երրորդը գլխաւորն է եռեակում՝ նրա գլխի երկու կողմից օձերն են (նկ. 18 ա, 18բ, 18գ)⁷⁹: Այս երեքը, անշուշտ, միևնույնի համեմատ աւելի բարձր դիրք ունեցող անձեր են, իսկ օձերը ընդգծում են ամենագլխաւորին:

Այդ քանդակը ներկայացնում է, մեր կարծիքով, Բագրատունեաց թագաւորական տան անձը (հնարաւոր է նաեւ կենաց ծառի մօտ կանգնածը նոյնպէս թագաւորական տնից էր):

Թ-Ժ. դդ. (գուցէ եւ նախորդ եւ յաջորդ դարերում) օձերը որպէս կանոն պատկերւում էին զահերէց իշխանների հետ միասին, այդպէս է, օրինակ Տաթեւում վանքի գլխաւոր տաճարի հիւսիսային ճակատի լուսամուտի պսակի պատկերը՝ իշխան Գրիգոր Սուխանի կախորական դիմաքանդակը, պահպանիչ գոյգ օձերով (նկ.19):

⁷⁹ Տե՛ս նաեւ T. M. Thierry, *նշուած աշխատութիւնը*, p. 46,47, fig. 26.



Նկ. 19

Կտիտորական քանդակ: Տաբուի վանք, գլխավոր տաճար

Նոյնը նաեւ՝ արեւելեան ճակատի խորշերի պատկերները՝ Սիւնեաց Աշոտ գահերէց իշխանի եւ նրա կին իշխանուհի Շուշանի, նոյնպէս զոյգ օձերով երկու կողմից⁸⁰ :

Թմբուկի քանդակաշարը, այսպիսով, իրենից ներկայացնում է կտիտորական քանդակների խումբ:

Սխալում է ժ. Մ. Տիերին, երբ օձերի հետ պատկերուած մարդու քանդակը համարում է քանդակող վարպետի կողմից կոյս Մարիամի կերպարի սխալ մեկնաբանում՝ վարպետը իբր շփոթուել է եւ Մարիամի ակնքաձեւ ծայր ունեցող գլխածածկը հասկացել է որպէս օձ⁸¹ :

Եկեղեցու հիւսիս-արեւմտեան ճակատում կայ մէկ այլ քանդակ, վերցուած շրջանակի մէջ, որի տակ մեծ օղակ է: (արդեօ՞ք օղակը պատահական է): Քանդակուած է մարդու գլուխն ու կուրծքը: Երկու կողմերից պահպանիչ օձեր են (Նկ. 20):

Ժ. Տիերիի կարծիքով այստեղ պատկերուած է ս. Գրիգոր Լուսաւորիչը, որին կծոտում էին օձերը, ինչպէս Խոր Վիրապում⁸² : Բայց քանդակից պարզ երեւում է, որ օձերը պահպանիչ

⁸⁰ Տէ՛ս Ս. ՄՆԱՅԱԿԱՆԵԱՆ, նշուած աշխատութիւնը, էջ 14-15, նկար 6,7,

⁸¹ Жан Мишель Тьерри, Скульптурный докер..., с. 4.

⁸² Жан Мишель Тьерри, Скульптурный докер..., с. 7. Նոյնի՝ La cathedra-
ie..., p. 50-56.

են, բացի այդ, չի բացատրուած՝ ինչ առիթով եկեղեցու ճակատին պէտք է քանդակուէր Գրիգոր Լուսաւորչի պատկերը:



Նկ. 20

Կոխտորական Բանդակ Կարսի Մայր տաճարում

Մեր կարծիքով, այս քանդակը վերաբերում է այն անձին, որն տասներկու կոխտորներից ամէնից մեծ դեր է կատարել եկեղեցու կառուցապատումում: Սա նոյնպէս կոխտորական քանդակ է, անկախ նրանից պատկերուած է Աբաս Թագաւորը թէ՛ նրա մերձաւոր ազգականներից որեւէ մէկը: Նման առանձին կոխտորական քանդակ կայ նաեւ Սանահնի Աստուածածին եկեղեցում, որի մասին կը խօսուի ստորեւ: Սակայն եկեղեցու քանդակները չեն սահմանափակում թմբուկի քանդակաշարով:

Եկեղեցու ներսում, չորս տրոմպերը նոյնպէս ունեն քանդակներ,


ա. հիւսիս-արեւմտեանը (ուղղահայեաց նիստի վրայ) ցուլի մուկթ է, կոտոշները ուղղուած յետ:

բ. հարաւ-արեւմտեանը, ներքեւի եզրին պատկերուած է արծիւ դիմահայեաց դիրքով, գլուխը թեքուած ձախ, թեւերը բացուած:

գ. հարաւ-արեւելեան տրոմպ՝ (ներքեւի նիստ) քանդակուած է մարդու գլուխ: Ճաղատ, ականջները փոքր, աչքերը լայն բացուած:

դ. հիւսիս-արեւելեան տրոմպում նոյնպէս քանդակուած է մարդու գլուխ, կատարման ձեւով նման նախորդին, բայց գլուխը օղակուած է երկթեւանոց հիւսուածքով (նկ. 21, 21ա, 21բ,

21գ): Արեւմտեան չորս ներքին կամարամիջոցները նոյնպէս ունեն քանդակներ՝ նրանք չորսն են. երկուսը մարդկանց գլուխներ, միւս երկուսը ոչխարի եւ կովերի գլուխներ (նկ. 22, 22ա)⁸³:



Նկ. 21, 21ա, 21բ, 21գ

Զինանշաններ եւ կախոյրական քանդակներ
Կարսի Մայր տաճարում

Այսպիսով, Կարսի Առաքելոց Մայր տաճարը ունի հարուստ քանդակազարդեր: Նրանք մի կողմից զարդարում են կառոյցը, բայց ունեն նաեւ այլ իմաստ. թմբուկի բարձրաքանդակների շարքը ներկայացնում է Աբաս Բադրատունի թագաւորի գահակալութեան (928-953) տարիների հայ աւատապետական վերնախաւի այն ներկայացուցիչներին, որոնք առաւել մօտ էին թագաւորական տանը, իսկ նրանցից երկուսը (գուցէ երեքը) ամենայն հաւանականութեամբ Բադրատունեաց տան ներկայացուցիչներ էին: Այդ քանդակաշարը եզակի օրինակ է Բադրատունեաց (նաեւ յաջորդ դարերից) շրջանից, երբ գահակալի կառոյցում պատկերւում է նրա քաղաքական յենարանը, որը կապուած էր գահակալ-գերագաւի հետ ծառայութեան յարաբերութիւններով կապերով: Այդպիսի եզակի երեւոյթ առկայ է միայն Գագիկ

⁸³ Жан Мишель Тьерри, Скульптурный докер..., с. 6. Т. М. Thierry, նրա շուրջ աշխատութիւնը, p. 53.

Արծրունի թագաւորի կառուցած Աղթամարի ս. Նշան տաճարում (այնտեղ շատ աւելի ճոխ ձեւով):



Նկ. 22



Նկ. 22ա

Զինանշաններ Կարսի Մայր տաճարում

Տաճարի ներսի քանդակներում եւս ներկայացուած են կառուցմանը մասնակցած աւատապետները՝ չորսը իրենց դիմաքանդակներով, իսկ միւս չորսը՝ իրենց տոհմական զինանշաններով: Ներսի քանդակների հետ առնչուող աւատապետների խումբը ինչ-որ բանով տարբերուած էր դրսի քանդակաշարում ներկայացուած աւատապետներից:

Այսօր դժուար է պատկերացնել այդ տարբերութիւնը: Կարելի է ենթադրութիւն անել, որ թմբուկի (դրսի) քանդակները ներկայացնում են ազնուականութեան աւելի բարձր խաւը, իսկ ներսի քանդակները նրանց, որոնք աւելի անմիջականօրէն զբաղուել են տաճարի կառուցումով: Բոլորը միասին աւատապետական ազնուականութեան ներկայացուցիչներ են եւ քաղաքական յարաբերութիւնների համակարգով կապուած էին անձամբ Աբաս Բագրատունու եւ թագաւորական տան հետ:

Աբաս Բագրատունին ձեռնամուխ եղաւ վարչական բարեփոխումներին նաեւ տոհմական տիրոյթների առանձին երկրամա-

սերոմ, մասնաճորայէս Տաշիր-Ձորագետում: Այդ վերափոխումներն էլ հետ է կապուած Սանահնում Աստուածածին եկեղեցու կառուցումը: Սա Սանահնի առաջին եկեղեցին է, իսկ վանքը հիմնուել է Աբասի յաջորդ Աշոտ Գ-ի օրօք, որը շարունակեց եւ աւարտեց բարեփոխումները Տաշիրում:



Նկ. 23

Զինամշակման Սանահնի
Ս. Աստուածածին եկեղեցում

նիւնների խորհրդանշաններ են, սակայն վերջինները ունեն իրենց խիստ որոշակի պատկերատիպը: Նրանք ներկայացուած են թեւաւոր էակների տեսքով, մինչդեռ Սանահնում թեմաները հիմնովին տարբեր են՝ չկայ արծիւը, առիւծը, չկան խորհրդանշանների գլխաւոր յատկանիշը՝ թռչնաթեւերը⁸⁴:

Կարելի է ենթադրել, շարունակում է Ս. Մնացականեանը, որ այստեղ առկայ են այնպիսի հնաւանդ քանդակագործական թեմաներ, ինչպիսիք են պահպանիչ էակներ: Ինչպէս Տաթեւում հիմնական (գլխաւոր) կոտորոնների դիմաքանդակների երկու կողմերում պատկերուած են վիշապ օձեր, Անիի պալատական եկեղեցում առիւծների եւ եղների գլուխներ, Գանձասարում եղների եւ խոյների գլուխներ, այնպէս էլ այստեղ: Դիմաքանդակը ամենայն

⁸⁴ ՄԵԱՅԱԿԱՆԵԱՆ Ս., նշուած աշխատութիւնը, էջ 68:

⁸⁵ Նոյնը, էջ 68-69:

հաւանականութեամբ ներկայացնում է կտիտորին, իսկ միւս պատկերաքանդակները հնաւանդ պահպանիչ խորհրդանշաններ են⁸⁶:

Ս. Մնացականեանը համարեա մօտեցել է ճշմարտութեանը՝ քանդակները աւետարանիչների նշանները չեն, այլ այն աւատապետների գինանշաններն, որոնք կառուցել են եկեղեցին, իսկ դիմաքանդակը ներկայացնում է կտիտորին: Պէտք է ասել, որ կտիտորական քանդակ կայ նաեւ եկեղեցու թմբուկի արեւելեան ճակատին: Դա փոքրածաւալ մարդկային քանդակ է, ոչ բարձրաբունստ կատարմամբ, բայց անշուշտ նոյնպէս կտիտորական (նկ. 24): Երկու քանդակներ պահպանում են տարբեր մարդկանց, նրանց դիմագծերը տարբերւում են: Ո՞րն է նրանցից գլխաւոր կտիտորը՝ դժուար է ասել, տրամաբանօրէն թւում է, թէ դրսի, բայց նրա քանդակապատկերը շատ անշուք է: Այս հարցերը կը պարզուի միայն լրացուցիչ աղբիւրագիտական տուեալների միջոցով:

Ինչ վերաբերւում է կենդանիների քանդակներին, ապա պարզ նկատւում է զուգահեռ Կարսի տաճարի քանդակների հետ. այստեղ եւս կայ ցուլ եւ գոմէշ (ոչ թէ երկու ցուլ) եւ մէկ խոյ: Սրանք համընկնում են Կարսի քանդակների հետ, միայն խոյերի կոտորները տարբեր ձեւի են:

Ուրեմն Կարսի մայր տաճարը կառուցող աւատապետներից մի քանիսը մասնակցել են նաեւ Սանահնի եկեղեցու կառուցմանը, դրանք պէտք է լինէին արքունիքին առաւել մօտ աւատապետներից: Յուշերի քանդակագոյգը (դրանցից մէկը հաւանաբար գոմէշ) կրկնւում է ԺԲ. դ. վերջում Սանահնի վանքի առաջնորդ Յովհաննէս եպիսկոպոսի կառուցած մեծ զաւթի քանդակներում: Գաւթի սիւնե-




Նկ. 24

Կտիտորական Բանդակ Սանահնի
Ս. Աստուածածին եկեղեցում

⁸⁶ Նոյնը, էջ 69:

ընդ մէկը ունի չորս զինանշան քանդակ՝ զոյգ կատուաընտանիքի գիշատիչներ (յովագ), եւ զոյգ ցուլեր (բայց տարբեր մուլթնեւորով, հաւանաբար մէկը գոմէշ⁸⁷ : Ինքնին բխում է եզրակացութիւն, որ ցուլերի զոյգը այն աստապետների զինանշաններն են, որոնք դեռեւս Աբաս թագաւորի օրօք Բագրատունիների տանը մօտ կանգնած իշխանական տներին էին: Ընդ որում շատ մօտ, քանի որ այդ կապը չի ընդհատուել Շիրակի Բագրատունիների անկումից յետոյ (1045), շարունակուել է Տաշիր-Ձորագետում իշխող Բագրատունի-Կիւրիկեանների հետ, մինչեւ ԺԳ. դ. կէսերը:

1251-52 թթ. Կիւրիկեանների նոր բերդի իշխանութեան սահմաններում (Գարդման գաւառը, ներկայիս ՀՀ Տաւուշի մարզ) ակադեմիկէն է Խորանաշատ վանքի գաւթի շինարարութիւնները: Նրա շքամուտքում խոյակներին փոխարէն տեղադրուած են երկու զինանշան քանդակներ՝ մէկը կատուաընտանիքի գիշատիչ (սա Կիւրիկեանների զինանշանն է եւ նման է Սանահնի միջնադարեան կամրջի վրայ տեղադրուած Կիւրիկեանների քանդակ-զինանշաններից մէկին)⁸⁸: Նրա հետ զոյգ է ցլի կամ գոմէշի մուլթի քանդակը (նկ. 25), որը ոճականօրէն եւ տոհմական պատկանելիութեամբ Սանահնի միջոցով կապուած է Կարսի ցլաքանդակին: Յլապատէ՛ր զինանշանները մատնացոյց են անում, որ տուեալ դէպքում գործ ունենք միեւնոյն տոհմի հետ, որն առնուազն Ժ. դ. կէսերից ծառայութեամբ կապուած է եղել Բագրատունիների հետ եւ պահպանել է այդ կապը Կիւրիկեանների հետ մինչեւ ԺԳ. դ. կէսերը:



Նկ. 25

Ջինամշան Խորանաշատի
գաւթի մուլթին

⁸⁷ Հայկական գիմնաշաններ, մաս I, էջ 39, 40, նկ. 28 (յովագից աջ): Երկրորդը նկարի վրա չի երեւում:

⁸⁸ Նոյնը, էջ 40, 41. Նկար 29-29գ եւ 30, Սանահնի կամուրջը կառուցել է XII դ. 1170-ական թթ. վերջում Մածնաբերդի իշխան Աբաս Կիւրիկեանի կին Վանենի իշխանուհին, վաղամեռիկ ամուսնու իշխատակին (մահացել է 1176 թ.): Տե՛ս Հայկ. գիմնաշաններ, մաս I, էջ 40:

Յաւօք առ այժմ անյայտն է մնում տոհմի ազգանունը, բայց հաւատացած ենք, որ առաջիկայում հնարաւոր կը լինի պարզել: Բոլոր դէպքերում, դա եղել է Ժ-ԺԱ. դդ. ազդեցիկ աւատապետական տներից մէկը, որը մասնակից է եղել թագաւորական տան կարեւոր քաղաքական ձեռնարկումներին (Կարսում Մայր տաճարի կառուցում, այլ կերպ ասած՝ կաթողիկոսութեան հաստատումը մայրաքաղաքում, Տաշիր-Ձորագետում վարչական բարեկարգումներ եւ այլն): Նա չի խզել կապերը Բագրատունիների հետ նոյնիսկ Բագրատունեաց թագաւորութեան անկումից յետոյ (1045):

Կարսի Մայր տաճարի գինանշան եւ կտիտորական քանդակները եւ Բագրատունեաց ոստանի մի քանի կառույցների գինանշանները (Տաշիր-Ձորագետ, Խորանաշատ) կապուած են միմեանց հետ եւ արտացոլում են այն քաղաքական կապերը, որոնք գոյութիւն ունեցել են Բագրատունեաց թագաւորական տան գլխաւորած քաղաքական համակարգի ներսում: Կարելի է ասել, որ Բագրատունեաց ոստանի նշանները (տուեալ դէպքում Սանահնի, Խորանաշատի) խմբաւորում են Կարսի մայր տաճարի քանդակների շուրջ այնպէս, ինչպէս Բագրատունիների կախեալ աւատապետական տները համախմբուած էին Բագրատունի հայոց թագաւորի շուրջ:

Կարսի տաճարի բարձրաքանդակների ուսումնասիրութիւնը գինանշանների տեսանկիւնից նոր է սկսում եւ այն կարող է իր կարեւոր նպաստը բերել Ժ-ԺԳ. դդ. քաղաքական պատմութեան լրացուցիչ ուսումնասիրութեան կարօտ հարցերի լուսաբանմանը:

ԲԱԳՐԱՏՈՒՆԵԱՅ ՏԵՐՈՒԹԵԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ ԱՐՇԱՐՈՒՆԻՔԻ ԱԻԵՏԱՐԱՆԻ ԶԻՆԱՆՇԱՆՆԵՐ ՄԱՆՐԱՆԿԱՐՆԵՐՈՒՄ

Արչարունիք գաւառը, Շիրակի հետ միասին կազմում էր Բագրատունիների թագաւորական տան տիրոյթների կորիզը, այստեղ էր գտնւում Բագարանը, Աշոտ Բ. Բագրատունու օրօք երկրի քաղաքական կենտրոնը (885-890) թթ՝ մայրաքաղաք):

Արչարունիքը կոչւում էր նաեւ Երասխաձոր, այստեղ կային շատ ձորեր՝ Վիշապաձոր, Բնաձոր, Խաւարաձոր, Կամրջաձոր,

Ձոր Կաղզուանայ եւ այլ, որոնք տարբեր ժամանակներում մշակոյթի կենտրոններ են եղել: Գրչութեան հին կենտրոններից էր Վանգոյս վանքը (Մայրաձոր), Արշարունիքի հոգեւոր-մշակութային դպրոցը յայտնի էր արդէն է. դ., Ը. դ. ժամանակաւոր դադարից յետոյ, Բագրատունեաց տիրապետութեան շրջանում, Արշարունիքի կենտրոնների մի մասը վերսկսեցին իրենց գործունէութիւնը, հիմնուեցին նորերը:

Ժ. դ. կէսերին, Աշոտ Գ. Ողորմածի վարչական բարեփոխումների հետեւանքով 961 թ. Արշարունիքը, Վանանդ գաւառի հետ միաւորուեցին նոր ստեղծուելիք խոշոր վարչական միաւորի մէջ: Դա փոխարքայութիւն էր Կարս կենտրոնով, որի կառավարիչ նշանակուեց թագաւորաեղբայր Մուշեղը (961-984): Նրան տրուեց թագաւորելու (այսինքն՝ կառավարելու) իրաւունքը, (այս փոխարքայութիւնը պատմագիտութեան մէջ սկզբունքորէն սխալ մեկնաբանութեամբ համարոււմ է թագաւորութիւն)⁸⁹: Փոխարքայութեան ստեղծումը նպաստեց երկրամասի տնտեսական, գիտամշակութային զարգացմանը, փոխարքայ-թագաւոր Աբաս Բ. Կարսեցին (984-990) հիմնեց նոր վանքեր (Շիրիմք, Թրին), հիմնուեցին նոր վարդապետարաններ, կրթական օջախներ (օր. Ժ. դ. վերջում հիմնոււմ է Կաղզուանի դպրոցը, որտեղ գործել են գիտնական վարդապետներ Սամուէլ Կամրջաձորեցին, ապա Ստեփանոս Ասողիկը): Կաղզուանից ոչ հեռու (Մայրաձորում) Ժ-ԺԱ. դդ. գործել է մէկ այլ հոգեւոր-մշակութային խոշոր կենտրոն՝ Սանդղկավանքը: Նրա անունը գրաւոր աղբիւրներում տարօրինակ ձեւով չի հանդիպում, կենտրոնի բեղմնաւոր գիտական գործունէութեան մասին վկայում են մեզ հասած երեք աւետարաններ, գրուած եւ նկարազարդուած ԺԱ. դ. առաջին կէսին: Դրանք են, «Բէգիւնց» կոչուած, 1053 թ. գրուած եւ Մոզնու աւետարան անունով ձեռագրերը, նրանց գրիչն ու ծաղկողն է Յովհաննէս երէց Սանդղկավանցին, որին աշակցել են վանքում աշխատող հմուտ արհեստաւորներ՝ ձեռնագրեր, ներկեր պատրաստողներ եւ այլ⁹⁰: Վերջերս լոյս տեսաւ այս ծաղկող վարպետի

⁸⁹ Տե՛ս մեր մենագրութիւնը՝ Բագրատունեաց Հայաստանի պետական կառուցումներն ու վարչական կարգը, Երեւան, 1990, էջ 151-153:

⁹⁰ ՄԱԹԵՒՈՍԵԱՆ Ա., Գրիչ Յովհաննէս Սանդղկավանցի («Մոզնու Աւետարանը»): Տե՛ս «Բանբեր Մատենադարանի», 1971, N 10:

մանրանկարների ալբոմը⁹¹ (այսուհետև նշելու ենք յապաւումով Յովհ. Սանդղ., ալբոմ):

Բարձր զնահատելով Յովհաննէս Ժաղկողի նկարչական արուեստը, մանրանկարչութեան մասնագէտները մեկնաբանել են նրա գեղարուեստական ոճը, գոյների ընտրութիւնը, կատարողական բարձր վարպետութիւնը: Առանձնապէս դա վերաբերում է Մոդընու (աւելի ճիշտ՝ Արշարունիքի) աւետարանին:

Այս աւետարանի մանրանկարների արուեստը վերլուծելիս, մասնագէտները նշում են, որ բացի աւանդական, այն է՝ Աւետարանիչների պատկերներից եւ լայն տարածում գտած կրօնական թեմատիկայի («Մուտք Երուսաղէմ եւ այլ») մի շարք մանրանկարներում պատկերուած են տարբեր կենդանիներ եւ գազաններ: Տրոււմ է վերջինների պատկերագրութեան առանձնայատկութիւնը, գունազարդումը եւ այլ մասնագիտական նկարագրութիւն, որոնք առնչւում են մանրանկարչութեան արուեստի հետ: Բայց ուշադրութիւն չի դարձուել, որ թուարկուած մանրանկարներն ունեն որոշակի թեմատիկ ուղղութիւն՝ դա նրանց զինանշան բնոյթն է: Մանրանկարներում ներկայացուած են Բագրատունեաց դարաշրջանի խոշոր ազնուական տոհմերի, առաջին հերթին Բագրատունեաց տան, ինչպէս նաեւ նրանց կախեալ իշխանական տներից մի քանիսի զինանշանները:

Զինանշանների յօինուածքները տրուած են մշակուած տիպաբանական կանոններով, որոնցում պարզորոշ երեւում է որոշակի օրինաչափութիւն:


Յօրինուածքների թւում կայ մէկը, որը համոզուած կարելի է անուանել գլխաւոր կամ մայր յօրինուածք: Նրան կրկնաօրինակում են միւս նշանների յօրինուածքները, որոնք մայր-օրինակից ունեն մասնակի տարբերակումներ:

Մայր յօրինուածքը ունի հետեւեալ կառուցուածքը:


Խորանը բաժանուած է երկու մասի՝ վերին, այն է կիսախորանի քառանկիւն, այն ունի կամարաձեւ շրջագիծ, որի ներսում պատկերուած են գազանների պատկերներ-զինանշաններ:

⁹¹ ՅՈՎՀԱՆՆԵՍ ՍԱՆԴԼՈՎԱՆԵՑԻ (ալբոմ): Կազմեց, առաջաբանը եւ ծանօթագրութիւնները գրեց Տատյամա Իզմայլովան, Երեւան, 1986:

Ներքին մասում խորանի զոյգ կրկնասիւնների պատուանդանների մօտ տեղադրուած են զազանների, տուեալ զէպօքում առիւծների «ծնող-զոյգը»: Նրանց վերեւից, մինչեւ կիսախորանի ներքին նիստը, ձգւում են կենաց ծառի ճիւղերը: Այս զէպօքում կենաց ծառը կիսուած է երկու մասի այնպէս, որ կէսերից մէկը առիւծներից մէկի վերեւում է: Ստացւում է պատկեր, երբ «ծնող-զոյգից» իւրաքանչիւրը ունի կենաց ծառ (կենաց կիսածառի ձեւով): Կիսախորանի վերին նիստի վրայ դրուած է անօթ, որից աճում է կենաց ծառ, իսկ վերջինի վրայ դրուած է խաչ: Խորանը ունի նաեւ վարագոյրներ (նկ. 26), (Յովհ. Սանդղ., ալբոմ, նկ. 31):



Նկ. 26



Նկ. 27

Խորհրդանիշ-մանրանկարներ
Արշարունիքի Աւետարանում (Մանգղկավանք)

Բնական է, որ զազանների «ծնող-զոյգը» հանդիսանում է որեւէ տոհմի զինանշանը:

Զինանշան պատկերներով խորանը նորոգութիւն է մանրանկարչութեան մէջ, այն յարմարեցուած էր նոր տիպի խնդիրների պահանջները բաւարարելուն: Մոզնու (Արշարունիքի) աւետարանի խորաններում, զրում է արուեստագէտ Լ. Դուրնովոն, ան-

միջապէս աչքի է ընկնում նրանց նոր տեսքը, կամարը ներառնում է քառանկեան մէջ եւ վարպետը զգալով անհամամասնութիւնը վերին մասի (կիսախորանի) եւ կրող սիւների միջեւ, կրկնապատկում է սիւները: Խորանը որպէս ամբողջութիւն ընդունում է շքամուտքի տեսք քառանկիւնի վերնամասով, որը յաճախ ունենում է կամարամազիկ (չրջանագիծ)⁹²:

Լ. Դուրնովոն նկատել է Յովհաննէս ծաղկողի նորաձեւութիւնը խորանի պատկերում՝ նրա կամարը: Բայց նա ուշադրութիւն չի դարձրել, որ նման կամարներ ներկայ են Մլժէի Աւետարանի որոշ մանրանկարներում, մասնաւորապէս «Նեղոսի տեսարանում» եւ Բազրատունեաց զինանշանում (նկ. 17): Վերջինի ազդեցութիւնը ԺԱ. դ. զինանշան յօրինուածքների, մասնաւորապէս վերը նշուած մայր-օրինակի վրայ, խիստ զգալի է:

Երկուսի յօրինուածքները ունեն ընդհանուր կառոյց եւ բաղադրիչներ, տարբերում են վերջինների մասնակի տեղաշարժերով:

862 թ. մանրանկարի «Ծնող-զոյգ», առիւծները Յովհաննէս ծաղկողը տեղադրել է սիւների պատուանդանի մօտ, քանի որ խորանի կենտրոնի տարածութիւնը զբաղեցնում է Աւետարանի էջը: Նոյն այդ պատճառով էլ նա ստիպուած է եղել կենաց ծառը նկարել Աւետարանի էջի երկու կողմերում, որպէսզի առիւծներին ոչ մէկը չհեռանայ ծառից: Նախատիպում կենաց հեղուկի անօթը ծառի վրայ է, նոր օրինակում այն տեղափոխուած է կիսախորանի վերին նիստի վրայ, պահպանելով ծառի սաղարթի նշանը: Ի տարբերութիւն նախատիպի, անօթի վրայ փռուած է ծածկոց-շոր, որի ծայրերը կախուած են անօթի տարբեր կողմերից: Այստեղ աւելացուած է նաեւ փոքրիկ խաչ:


Սիւները, ինչպէս ասուեց, կրկնապատկուած են: Նախատիպի կամարը նոր մանրանկարում տեղադրուած է կիսախորանի ներսում, իսկ նրա ներքին տարածութիւնը լրացուած է զինանշաններ (առիւծների) պատկերներով:

Այսպիսով, մանրանկարի յօրինուածքը ստեղծելիս ԺԱ. դ. ծաղկողը նկարիչը որպէս նախատիպ օրինակ օգտագործել է Թ.


⁹² Տե՛ս Լ. Дурново, Краткая история древнеармянской живописи, Ереван, 1957, с. 22-24.

դ. յօրինուածքը, եւ յարմարեցրել է այն նոր օրինակի պահանջներին:

Իսկ նոր պահանջներինց գլխաւորն էր տեղադրել կախեալ աւատապետների զինանշանները: Այդ խնդիրը լուծելու համար նա օգտագործում է կամարի շրջանագծի ներքին տարածութիւնը, որը Թ. դ. նախատիպում (862 թ. մանրանկար) լցուած է ծաղիկներով, եւ փաստօրէն ազատ է: Շրջագծի մէջ նկարուած են երկու տեսակի կենդանիներ՝ գիշատիչներ (առիւծի ընտանիքից) եւ թռչուններ, որոնք յաջորդում են միմեանց: Գիշատիչներից մէկը (չարքում առաջինը, ձախից աջ հաշուած) տիպիկ առիւծ է, միւսը՝ երեւակայական թեւաւոր կենդանի առիւծի գլխով): Երրորդ գիշատիչը (չարքում հինգերորդը) նոյնպէս պատկանում է առիւծի ընտանիքին, բայց չունի բաշ:



Նկ. 28



Նկ. 29

Խորհրդանիշ-մանրանկարներ
Արշարունիքի Աւետարանում (Մանդղկավանք)

Մեր ուսումնասիրութեան առաջին մասում ցոյց ենք տուել, որ տարբեր տեսակի եւ տարբեր կեցուածքով առիւծների օրինակները եղել են Բագրատունեաց թագաւորական տան եւ

նրա ճիւղաւորումների (Կիւրիկեանների, Կարսեցիների) տոհմական եւ անձնական տարբերակիչ նշաններ (զինանշան): Նրանց մի քանի օրինակներ ներկայացուած են մենագրութեան առաջին մասում (տե՛ս՝ «Հայկ. զինանշան, մաս I, նկ. 14-19»): Ցաւօք, տեխնիկական պատճառներով հնարաւոր չեղաւ ներկայացնել նաեւ Կարսի վերջին թագաւոր Գագիկ Բ. Կարսեցու (1049-1065) զինանշանը, որը պատկերուած է նրա զգեստի վրայ: (Տե՛ս Կարսի Աւետարանի մանրանկարը)⁹³:

Այսպիսով, մանրանկարի խորանը օգտագործուել է որպէս հարթութիւն, որի մէջ տեղադրուել է տուեալ տոհմի (Բագրատունիներ) նախատիպ օրինակը, բայց միաժամանակ կատարուել են նոր պահանջներին բխող աւելացումներ եւ ձեւափոխումներ՝ կամարի ներքին ազատ տարածութիւնը լցուել է խորհրդանշաններով, դրանով իսկ տոհմական յօրինուածքի մէջ աւելացուել են տոհմի կրտսեր տների նշանները: Նպատակը եղել է ներկայացնել թագաւորական տան եւ նրա տոհմակից կրտսեր ճիւղերի կապը զինանշանների միջոցով:

Խորանի ներսում կայ եւս մի նոր լրացուցիչ նշան՝ վարագոյրներ: Նրանց դերը ընդհանուր յօրինուածքի կառոյցում առայժմ պարզ չէ:

Գլխաւոր (մայր) յօրինուածքի պարզեցուած տարբերակ է մի մանրանկար որի խորանը կրկնում է մայր օրինակը՝ «ծնող-զոյգ» առիւծներ (աւելի ճիշտ՝ յովազներ) եւ կենաց կիսածառեր վարագոյրերով: Բայց ի տարբերութիւն նախորդ նկարի, այստեղ սիւնների արտաքին կողմից պատկերուած են բարձրահասակ կենաց ծառեր, որոնք ունեն անսովոր վրանաձեւ սաղարթ (ծածկ) (նկ. 27), (Յովհ. Սանդղ., ալբոմ, նկ. 33):


Այս նկարում կիսախորանի կամարի տակ ինչ-որ անսովոր, երկարավիզ կենդանիներ են:

Կիսախորանի վրայ դրուած է աւանդական անօթը խաչով եւ ծածկաշորով: Այստեղ անօթի վրայ դրուած է խաչը:

⁹³ Գունաւոր պատկերը տե՛ս Հայկական մանրանկարչութիւն, դիմանկար: Կազմեց, առաջաբանը եւ ծանօթագրութիւնները գրեց Աստղիկ Գեորգեանը, Երեւան, 1982, նկար 2:

Մայր օրինակի խիստ ազդեցութեամբ է կատարուած զինանշանների մէկ այլ մանրանկար, որը շատ սերտ կապուած է նախորդ երկու օրինակների հետ:

Այստեղ խորանը ունի նոյն կառոյցը, բայց սիւների մօտ առիւծների փոխարէն պատկերուած են այծեղջիւրներ («ծնող-զոյգ»): Սիւներից դուրս դրուած են կենաց ծառեր (նրանց ճիւղերը կազմում են օղակներ, որոնց ներսում թռչուններ են): Աւելացուած են նաեւ ծառերին յենուած կենդանիներ:



Նկ. 30



Նկ. 31

Խորհրդանիշ-մանրանկարներ
Արշարունիքի Աւետարանում (Մանգղկավանք)

Շատ ուշագրաւ է կիսախորանի ներքին տարածութեան ձեւաւորումը (կամարաձեւ շրջագծի տակ): Այստեղ պատկերուած են տարբեր տիպի կենդանիներ, անշուշտ խորհրդանշանների իմաստով: Անսովոր է նրանց դասաւորութիւնը: Նկարագրուած են՝ զոյգ առիւծներ վերասլաց դիրքով, նրանցից ներքեւ զոյգ քարայծ հորիզոնական դիրքով, իսկ սրանց տակ՝ փոքրածաւալ աւանակատիպ զոյգ կենդանիներ (երեք զոյգերն էլ «ծնող-զոյգեր» են): Առիւծները ունեն ընդհանուր շրջանակ, իսկ քարայծներից իւրա-

քանչիւրը առանձին (նկ. 28:) (Յուլ. Սանդղ., ալբոմ, նկ. 34): Վեցը նկարների խմբակային դասաւորութեան արտաքին շրջագիծը կենաց ծառի սաղարթի տպաւորութիւն է ստեղծում, որի գծապատկերը տեսնում ենք 862 թ. Մայր օրինակի նկարում:

Առիւծների բոլորից վեր կանգնած դիրքը ընդգծում է նրանց գերազանցութիւնը միւսների հանդէպ, նրանք անշուշտ խորհրդանշում են Բագրատունիների իշխանութիւնը: Ընդ որում նրանց կեցուածքը շատ նման է Կիլիկիայի թագաւոր Լեւոն Բ-ի դրամի վրայ պատկերուած առիւծների կեցուածքին (տե՛ս Հայկ. զինանշաններ, մաս I, նկ. 11):

Միւս կենդանիները (քարայծ, աւանակատիպ) բազրատունիների կախեալ իշխանական տների զինանշաններ են: Խիստ ուշագրաւ է, որ քարայծները արտաքինով (պատկերագրութեամբ) շատ նման են Քասախի բազիլիկայի շքամուտքի բարձրաքանդակի քարայծներին (նկ. 15):

Մենք համոզուած ենք, որ երկու դէպքում էլ (Քասախ և Սանդղկալանք) գործ ունենք միեւնոյն ազնուական տոհմի նշանի հետ: Այդ տոհմը Արշակունիների ժամանակ եղել է ազդեցիկ աւատապետական տուն, եւ գոյատեւել է նաեւ յաջորդ դարերում, հասնելով մինչեւ ԺԱ. դ.: Բագրատունիների օրօք այն եղել է նրանց մօտիկ տներից եւ կախեալ իշխանութիւն: Միւս զոյգը՝ աւանակատիպ կենդանին, Բագրատունիների կախեալ իշխանի զինանշանն է, մանրանկարներից մէկում նրան յատկացուած է առանձին պատկեր, ուր սիւններից ներս դրուած է աւանակի «ծնող-զոյգ» կենաց ծառով եւ այլ մանրամասներով: Բայց կիսախորանի կամարը եւ ներսի տարածութիւնը զինանշաններ չունեն (նկ. 29) Յուլ. Սանդղ., ալբոմ, նկ. 30): Ուրեմն այս տոհմը եղել է Բագրատունիների Հպատակներից, ընդ որում քարայծի տոհմից աւելի երկրորդական, քանի որ աւանակները տեղադրուած են քարայծներից ներքեւ, շատ աւելի փոքր չափով (նոյնիսկ գոյները տարբեր են՝ աւանակը գորշ-կանաչ, իսկ առիւծներն ու քարայծները՝ դեղին, մօտ ոսկուն):

Եռաստիճան այս խումբը (նկ. 28) դասաւորուած է աւատապետական նուիրապետական բուրգի սկզբունքով՝ վերեւում գերադասն է (Բագրատունիները), ապա կախեալ տները, տեղաւորուած ըստ կարգավիճակի:

Ինչ հետեւութիւն կարելի է անել այս եռաստիճան խմբակային պատկերի եւ այծեղջիւրների «ծնող-գոյգի» ընկերակցութիւնից մէկ մանրանկարի մէջ:

Որպէս օրինաչափութիւն, գինանշան մանրանկարներից իւրաքանչիւրը յատկացուած է ազնուական որեւէ տոհմին, եւ նկարիչը սիւնների մօտ (յօրինուածքի պատուանդանում) պատկերել է այն տոհմի գինանշանը, որին նուիրուած է տուեալ մանրանկարը: Նա է տուեալ յօրինուածքի գլխաւոր դէմքը: Բայց վերջին օրինակում այծեղջիւրների հետ ներկայացուած է նաեւ աւելի կարեւոր նշան՝ դա առիւծն է: Դրանով իսկ գինանշանների միջոցով ներկայացուած են հպատակը՝ այծեղջիւրի գինանշանով հանդէս եկող իշխանական տունը եւ գերադասը՝ առիւծի գինանշանով հանդէս եկող Բագրատունիների թագաւորական տունը: Կարծէք թէ խախտուած է տոհմերը ներկայացնելու սկզբունքը: Ի հարկէ նկարիչը սկզբունքը չի խախտել, պարզապէս այծեղջիւրին այս մանրանկարում յատկացուած է յատուկ տեղ, խորանի ներքեւում եւ վերեւում զտնուող գինանշանների միջոցով ընդգծուած է այծեղջիւրի կարեւոր դերը աւատապետական սանդուղքում: Յաւօք, այծեղջիւրի տէր իշխանատան տունը եւ ոչ էլ նրան տրուող արտօնութեան պատճառները մեզ յայտնի չեն: Այս հարցը ԺԱ. դ. պատմութեան համար որոշակի հետաքրքրութիւն է ներկայացնում, բայց նրա պարզաբանումը ապագայի գործ է:

Միւս մանրանկարը գլխաւոր դէմք է, որի վրայ դրուած է փոքրիկ խաչ (նկ. 30), (Յովհ. Սանդղ., ալբոմ, նկ. 36): Երկու նկարներում էլ գինանշանների դասաւորութիւնը կատարուած է նոյն եղանակով՝ տրուած է օղակների շարք, իւրաքանչիւր օղակի շրջագիծը շարունակուելով ստեղծում է նոր օղակ: Օղակների մէջ պատկերուած են նշաններ՝ առիւծատիպ կենդանին, իսկ օղակների միջեւ պատկերուած են աղանձներ:

Այս առիւծատիպ նկարը մենք համարում ենք Բագրատունեաց կրտսեր տներին մէկի գինանշան:

Կախեալ իշխանութեան գինանշան է նաեւ ցուլերի «ծնող-գոյգը» (նկ. 31) (Յովհ. Սանդղ., ալբոմ, նկ. 32):

Այս մանրանկարում եւս սիւներից դուրս դրուած են առիւծներ, որոնցից աճում են ոճաւորուած կենաց ծառեր: Խորանի վրայ՝ անթի, վրան դրուած է խաչ: Ի տարբերութիւն միւս ման-

րանկարների, այստեղ անօթի երկու կողմերից պատկերված են յուշկապարիկներ, իսկ անօթի տակ բուսական ճիւղեր են, որոնց տրուած է օձագլուխների տեսք: Սակայն կիսախորանի կամարաձեւ շրջանագիծը չունի գինանշաններ, իսկ կիսախորանի ներսում պատկերված են կովի բռնուած երկու գիշատիչներ:



Նկ. 32

Խորհրդանիշ-մանրանկար
Արշարունիի Աւետարանում (Սանդղկավանք)

Միւս երկու մանրանկարներում որպէս գինանշան պատկերված են երեւակայական կենդանիներ, որոնք ինչ-որ իմաստ ունեն:

Յաջորդ մանրանկարը նոյնպէս ունի գինանշան, այստեղ պատկերված է երեւակայական կենդանու «ծնող-զոյգը»՝ Թեւաւոր առիւծ: Այս երեւակայական կենդանին իշխանական տներին մէկի գինանշանն է:

Կիսախորանի կամարը կենդանապատկերներ չունի, իսկ ներսում անսպասելիօրէն պատկերված է փղերի զոյգ կենաց ծառի անօթով (նկ. 32) (Յովհ. Սանդղ., ալբում, նկ. 29): Այս, առա-

Ղին հայեացքից տարօրինակ թուացող գուգորգութիւնը՝ արծուառիւծ-փիղ մեզ անհասկանալի է, ուստի խոսափու՞մ ենք որեւէ մեկնաբանութիւնից:

Զինանշան մանրանկարի մէկ օրինակ ունի նաեւ 1053 թ. Աւետարանը, ուր պատկերուած է նապաստակների «ծնող-գոյգը» կիսակենաց ծառերով եւ վարագոյրներով:

Նապաստակի զինանշանով տոհմը մեզ անյայտ է:

* * *

Յովհաննէս Սանդրկապանեցու ստեղծած զինանշան մանրանկարների շարքը մի եզակի երեւոյթ է հայ մանրանկարչութեան արուեստում: Նա մի կողմից պատկերացում է տալիս Ժ--ԺԱ. դդ. հայկական իշխանական տների զինանշանների մասին, որոնց մի զգալի մասը մինչ այժմ յայտնի չէր այլ աղբիւրներից (այդ թւում եւ եկեղեցական քանդակներից): Նշանների շարքը մատնանշում է, թէ ինչպիսի ճիւղաւորուած համակարգ է ներկայացրել Բագրատունիների կախեալ իշխանութիւնների խմբակցութիւնը, ընդ որում զինանշանները մատնանշում են Բագրատունեաց կրտսեր ճիւղերի աւելի մեծ թիւ, քան մեզ յայտնի է այսօր: Դրանք հաւանաբար Շիրակի տան անդամներն են, թագաւորի անմիջական ազգակիցներից: Յովհաննէսի ներկայացուած շարքը ունի նաեւ պատմա-աղբիւրագիտական արժէք, քանի որ ստիպում է փնտրել մեզ այսօր անյայտ զինանշանների տէրերին, որոշել նրանց դերը դարաշրջանի քաղաքական կեանքում: Պարզւում է նաեւ, որ Բագրատունեաց շրջանում գործել են հայ հնագոյն տների շառակիղները (քարայծի տոհմը): Որքան ցաւալի է, որ յայտնի չէ նրա ազգանունը: Բայց հէնց Սանդրկապանքի (կամ Արշարունիքի) ձեռագրի մանրանկարներն են մեզ յուշում նման ազնուական տոհմերի գոյութեան մասին:

Կասկածից վեր է, որ Յովհաննէս երէցը ձեռագիր նկարները կատարել է յատուկ պատուէրով, դա երեւում է նրանց կատարման ոճից եւ թեմատիկ բնոյթից: Ժամանակին արուեստա-

գէտ Լ. Դուրնովոն իրաւացիօրէն նշել է, որ «Մոդնո» Աւետարանի չքահանգէսային (հանդիսաւոր) ձեռագրի օրինակ է⁹⁴:

Ձեռագրերի ուսումնասիրող Ա. Մաթեւոսեանը միանգամայն տեղին նկատել է, որ Արշարունեաց դպրոցը, վայելում էր արքունիքի համակրանքը, եւ դրանով է բացատրուում Ձորմայրի (Մարաձորի) անապատի եւ Սանդղկավանքի բարգաւաճումը ԺԱ. դ., առաջին կէսին: Նշանաւոր վարպետների միջավայրը յարմար արուեստանոց էր արքայական պատուէրներ կատարելու համար: Այդ եւն վկայում մեզ հասած ձեռագրերը եւ առաջին հերթին Արշարունիքի Աւետարանը: Այս Աւետարանը Լ. Դուրնովոն եւ Ա. Մաթեւոսեանը համարում են թագաւորական պատուէր, որի հանդիսաւոր նկարագորդումը «արտացոլում է պատուիրատուի շրջապատող կենցաղի հարստութիւնն ու շքեղութիւնը»⁹⁵:

Միանգամայն համամիտ լինելով այս եզրակացութեան հետ, գտնում որ այսօր սխալ անունով կոչուող «Մոդնո» Աւետարանը գրուել է թագաւորական պատուէրով Արշարունիքի գրչութեան (հոգեւոր-մշակութային) կենտրոնում: Բայց պատուիրատուն եղել է ոչ թէ Կարսի թագաւորը, այլ Անիի շահնշահը, թագաւոր «ամենայն տանն հայոց» գահակալը: Այդ հաստատում են մանրանկարների զինանշան շարքի ճոխութիւնը, կախեալ իշխանների բազմութիւնը (հաշուած նաեւ թագաւորական տան կրտսեր անդամներին): Կարսի գահակալ տունը այդքան մեծ իշխանական շրջապատ չի ունեցել, այդպիսին կարող էր ունենալ միայն Անիում գահակալող Բագրատունի ազգապետ-շահնշահը: Ակներեւաբար, պատուիրատուն եղել է Բագրատունի շահնշահը, իսկ դա նշանակում է, որ Արշարունիքի Աւետարանը գրուել է մինչեւ 1045 թ. Անիի անկումը:

(Ծար. 2)

ՌԱՖԱՅԷԼ ՄԱԹԵՒՈՍԵԱՆ

⁹⁴ Л. Дурново, *Нշолад աշխատութիւնը*, էջ 24,

⁹⁵ ՄԱԹԵՒՈՍԵԱՆ Ա., *Нշолад յօդուածը*, էջ 394, ԴԻՌՆՈՎՈ, Հայկական մանրակարչութիւն, Երեւան, 1967, էջ 203:

**Armenian Coats-of-Arms
The Ardashesyans, The Arshagounis,
Developed Feudalism**

(summary)

RAPHAEL MATEVOSSIAN

The study of coats-of-arms is considered an important issue in historical research, because the science of coats-of-arms is, first and foremost, an auxiliary branch of history. The result of a historical study into coats-of-arms was our work "Armenian Coats-of-Arms" (Part I), published in 1994, which dealt with the definition of the coats-of-arms of three noble Armenian clans - the Bagratounis, Zakarians and Mamikonians - as well as Armenian national emblems in the 8th-13th centuries.

This article studies the coats-of-arms of only those clans that were present in the royal cemetery of the Arshakunyats in Aghts, and in the sculptures related to it in the 3rd century basilica of Kasakh.

The issue being studied is of historical order (partially even historically legal), acting, in some cases as the main source of information, and, in others, as an appendix to different sources. Coats-of-arms and other government concepts provide a subjective and creative reflection on standards of intra-political relations in feudal society, the administrative and political structure of the government, the official policies of the government and other related issues. That is why it is essential to know the rules and laws that society lived and developed by in order to correctly understand the coats-of-arms of any historical period.

The first part of this monograph studies the coat-of-arms of the Ardashesyans. The second part is dedicated to the coats-of-arms of the period of developed feudalism, in which the study of the coats-of-arms of the above-mentioned three clans continues.

Previous (1994) and current works do not exhaust the study of the rich heritage of Armenian coats-of-arms. The symbols and emblems of many Armenian clans still await researchers, including those of Vaspourakan, Syunik, Artsakh and the coats-of-arms of other areas.